ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (Հայաստան)
և
Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա)
միջև գիտական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետև՝ նախարարություն), տեղակայված Երևան 0010, Գլխավոր պողոտա, Կառավարական շենք 3 հասցեում, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի, մի կողմից

և

Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը, (այսուհետև՝ ԳՀԱԿ), տեղակայված Փարիզ-75016, Միշել Անժ 3 հասցեում, ի դեմս նախագահ Կատրին Բրեշինյակի և գլխավոր տնօրեն Արնոլդ Միգուսի, մյուս կողմից,

այսուհետև՝ Կողմեր

հիմք ընդունելով «Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» 1995թ. նոյեմբերի 4-ին ստորագրված պայմանագիրը, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

<u>Հոդված 1</u>

1.1 Սույն Պայմանագիրը նպատակ ունի Կողմերը ներկայացնող գիտաշխատողների և գիտահետազոտական խմբերի միջև զարգացնել ու խորացնել գիտական համագործակցությունը և համատեղ օգտագործել սարքավորումները :
Կողմերը կնպաստեն գիտական տվյալների և տեղեկատվության փոխանակմանը և համատեղ կստարեն հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը :

1.2 Կողմերը սույն պայմանագրի շրջանակներում կապահովեն երկկողմ առաջարկների կազմակերպումն ու ֆինանսավորումը, մասնավորապես՝
- կնպաստեն ԳՀԱԿ-ի և Հայաստանի գիտաշխատողների փոխանակմանը՝ առաջնահերթությունը տալով երիտասարդ գիտնականներին:
- կիրականացնեն գիտահետազոտական ծրագրեր ԳՀԱԿ-ի և Հայաստանի գիտահետազոտական խմբերի հետ համատեղ
- կկազմակերպեն համատեղ գիտական միջոցառումներ, մասնավորապես գիտաժողովներ կամ սեմինարներ Ֆրանսիայում, Հայաստանում կամ այլ երկրներում:

1.3 Կողմերը կիրագործեն նաև համագործակցություն՝ Գիտական համագործակցության միջազգային ծրագրերի (այսուհետ՝ ԳՀՄԾ), Միացյալ միջազգային լաբորատորիաների (այսուհետ՝ ՄՄԼ) և

Միջազգային գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ ՄԳԽ) կազմավորմամբ՝ ըստ Հավելված 2-ում շարադրված դրույթների:

Հոդված 2

2.1 1-ին հոդվածի 1.2-րդ կետում նշված համատեղ առաջարկների դրույթները կսահմանվեն Կողմերի համաձայնությամբ և կհանդիսանան առանձին արձանագրությունների առարկա:

2.2 1.3 կետում հիշատակված՝ ԳՀՄԾ, ՄՄԼ և ՄԳԽ շրջանակներում նախատեսված համատեղ գիտական հետազոտությունները կարող են ստանալ լրացուցիչ միջոցներ, որոնք կավելացվեն տվյալ գիտահետազոտական հաստատությունների տնօրինած միջոցներին: Կողմերից յուրաքանչյուրի ֆինանսական ներդրումը կսահմանվի ընդհանուր համաձայնությամբ՝ համագործակցության ամբողջ ընթացքի համար:

ԳՀՄԾ իրականացումը չի պահանջում հատուկ համաձայնագրի ստորագրում, սակայն մտավոր սեփականության հետ կապված խնդիրները կարգավորվում են գործընկեր գիտահետազոտական ինստիտուտների միջև կնքվող համաձայնագրով, որը կազմվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված մոդելի հիման վրա:

ՄՄԼ և ՄԳԽ համագործակցության շրջանակներում պարտադիր կերպով կնքվում են առանձին պայմանագրեր:

2.3 Գործուղող երկրի կազմակերպությունը հյուրընկալող երկրում իրականացնում է իր գիտաշխատողների ապահովագրությունը, որը ընդգրկում է բուժծառայության և պատահարների հետ կապված ծախսերը : Անհրաժեշտության դեպքում հյուրընկալող երկիրը պատշաճ ուշադրություն և օգնություն է ցուցաբերում:

2.4 Սույն Պայմանագրի շրջանակներում հյուրընկալված անձինք հոնորար չեն ստանա դասընթացների, դասախոսությունների, գիտաժողովների և հաշվետվությունների, ինչպես նաև նման բնույթի այլ գիտական գործունեություն ծավալելու համար: Բացի այդ, առանց ԳՀԱԿ-ի և նախարարության թույլտվության նրանք չեն կարող վարձատրություն պահանջող գործունեություն ծավալել իրենց աշխատանքային ծրագրով նախատեսված գիտահետազոտական գործունեության շրջանակներից դուրս:

2.5 Եթե համատեղ գիտահետազոտական ծրագրերը կպահանջեն սարքավորումների, գույքի կամ տրանսպորտային միջոցների ներկրում, հյուրընկալող Կողմն իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է միջոցներ ձեռնարկի իր կառավարության համապատասխան մարմիններից ներկրման մաքսերից ու տուրքերից ազատման թույլտվություն ստանալու համար:

Հոդված 3

3.1 Սույն Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով և ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից: Հետագայում այն ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերից մեկն այն դադարեցման կամ կասեցման մասին մյուս Կողմին գրավոր կծանուցի պայմանագրի ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ:

3.2 Սույն Պայմանագրի պայմանները կարող են լրացվել կամ փոփոխվել երկու Կողմերի համաձայնությամբ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և որոնք կկազմեն սույն Պայմնագրի անբաժանելի մասը :

3.3 Սույն Պայամանագրի մեկնաբանության կամ կիրառության հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

3.4 Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը կկարգավորվի ըստ Միջազգային իրավունքի կանոնների միջնորդ դատարանի միջոցով : Եթե Կողմերը գրավոր այլ որոշում չընդունեն, կկիրառվի Միջազգային առևտրի իրավունքի ՄԱԿ-ի հանձնաժողովի միջնորդ դատարանի կանոնադրությունը:

3.5 Սույն Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը կամ Պայմանագրի դադարեցումը չի ազդի դրա գործողության ժամկետի ընթացքում ստորագրված պայմանագրերի վրա, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվել :

Պայմանագիրը կազմված է 2 (երկու) բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ֆրանսերեն՝ ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն և օգտագործում

Գիտական Հետազոտությունների Ազգային կենտրոնի (ԳՀԱԿ) և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (ԿԳ Նախարարություն) միջև գիտական համագործակցության պայմանագրի շրջանակներում իրականացվող համատեղ հետազոտությունների և գիտական համագործակցության միջազգային ծրագրերի (ԳՀՄԾ) վերաբերյալ

Սույն փաստաթղթի նպատակն է ԳՀԱԿ-ի և նախարարության միջև կնքված գիտական համագործակցության Պայմանագրի շրջանակներում և դրա իրականացման ընթացքում ներկայացնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և օգտագործման վերաբերյալ ԳՀՄԾ-ի և համատեղ գիտահետազոտական ծրագրերի մեջ կիրառելի դրույթների՝ մտավոր սեփականության պաշտպանության և օգտագործման ոլորտում: Սույն փաստաթուղթը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

<u>Հոդված 1</u>

ԳՀԱԿ-ն և նախարարության փոխադարձաբար միմյանց տեղեկացնում են գիտահետազոտական համատեղ ծրագրերի և ԳՀՄԾ-ի իրականացման ընթացքում կատարվող աշխատանքների, ինչպես նաև ձեռք բերած արդյունքների մասին՝ այդ արդյունքները պաշտպանելու նպատակով:

<u>Հոդված 2</u>

2.1 Գիտահետազոտական համագործակցություն իրականացնող կազմակերպությունները համարվում են սույն Պայմանագրի ստորագրումից առաջ կամ դրանից հետո ձեռնարկած աշխատանքների՝ արտոնագրված կամ չարտոնագրված արդյունքների սեփականատերը:

2.2 Համագործակցության արդյունքները, անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ենթակա են արտոնագրման թե ոչ, ինչպես նաև համակարգչային ծրագրերը և տվյալների շտեմարանները, համարվում են ԳՀԱԿ-ի և գիտահետազոտական համագործակցություն իրականացնող հայկական կողմի իրավաբանական անձանց ընդհանուր սեփականությունը՝ իրենց ներդրած ավանդներին համապատասխան:

2.3 ԳՀԱԿ-ն և գիտահետազոտական համագործակցություն իրականացնող հայկական կողմը (այսուհետ՝ Համագործակցող կողմերը) համաձայնում են ձեռնարկել բոլոր միջոցները և իրականացնել բոլոր անհրաժեշտ քայլերը համագործակցության ընթացքում ստացված արդյունքների պաշտպանության համար՝ այդ թվում դիմելով մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանն այն դեպքում, երբ արդյունքները ենթակա են նման պաշտպանության:

2.4 Համագործակցող կողմերը յուրաքանչյուրի երկրում կիրառվող օրենքներին համապատասխան՝ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համար դիմումը, գրված երկուսի անունից, նախ ներկայացվում է Ֆրանսիայում՝ ֆրանսիական կողմի միջոցով, այնուհետև Հայաստանում՝ հայկական կողմի միջոցով:

2.5 Եթե Համագործակցող կողմերը նպատակահարմար են գտնում մտավոր սեփականության իրավունքի մասին փաստաթուղթ ստանալ Ֆրանսիայից ու Հայաստանից բացի այլ երկրում, նրանք փոխադարձ համաձայնությամբ ձեռնարկում են համապատասխան միջոցներ :

2.6 Դիմումները ներկայացնելուց հետո, մեկ ամսվա ընթացքում, Համագործակցող կողմերը փոխանակում են փաստաթղթերի և դրանց հավելվածների պատճենները:

2.7 Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ցանկացած դիմումի մեջ, հիմնական գործող անձանց և գյուտարարների հետ խորհրդակցելուց հետո, Համագործակցող երկու կողմերը պետք է նշեն այն գիտաշխատողների անունները, ովքեր սույն Պայմանագրի շրջանակներում ներդրում են ունեցել այն արդյունքների ձեռքբերման գործում, որոնց իրավունքի պաշտպանության համար դիմում է ներկայացվել:

2.8 Համագործակցող կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի սեփական հետազոտական կարիքների համար անվճար օգտագործել մասնավոր պայմանագրերի շրջանակներում ստացած արտոնագրված կամ չարտոնագրված արդյունքները:

<u>Հոդված 3</u>

3.1 Համագործակցող կողմերը պետք է անհապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն ստացված արդյունքների գնահատման համար: Նրանք համատեղ սահմանում են տվյալ երկրում պաշտպանված մտավոր սեփականության իրավունքների և արտոնագրերի օգտագործման ձևերը: Գնահատման գործընթացը կարող է վստահվել կամ Համագործակցող կողմերից մեկին, կամ երկուսին, կամ վստահվել երրորդ անձի:

3.2 Կողմերը երաշխավորում են, որ ձեռք բերված մտավոր սեփականության իրավունքները, հնարավորության սահմաններում, օգտագործվում են կոմերցիոն հիմքի վրա և ընդունելի ժամկետներում:

3.3 Ձեռք բերված արդյունքերի կոմերցիոն շահագործման եկամուտները, եթե չի գործում մասնավոր հակադիր պայմանագիրը, բաշխվում են համագործակցող կողմերի ներդրած ավանդների համապատասխան:

3.4 Համասեփականություն հանդիսացող համակարգչային ծրագրի կամ արտոնագրի կեղծման դեպքում Համագործակցող կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշում են դիմել համապատասխան մարմիններին՝ կեղծարարին կամ կեղծարարներին հետապնդելու նպատակով: Համաձայնության դեպքում այդ հետապնդումները կարող է իրականացնել Համագործակցող կողմերից մեկը՝ ընդհանուր հաշվից, ծախսերը կիսելու սկզբունքով: Եթե Համագործակցող կողմերից մեկը պարզորոշ հրաժարվում է հետապնդումից, մյուս կողմը կարող է այն իրականացնել իր ծախսերի, ռիսկի և եկամուտների հաշվին:

3.5 Համագործակցող կողմերից յուրաքանչյուրն ինքն է կարգավորում արդյունքների ձեռքբերմանը մասնակցած իր պաշտոնական անձանց, աշխատակիցների աշխատավարձերի վճարման և հնարավոր պարգևատրման հարցերը:

<u>Հոդված 4</u>

4.1 Մտավոր սեփականության իրավունքների ձեռք բերման և պահպանման հետ կապված ծախսերը կրում է ֆրանսիական Կողմը՝ Ֆրանսիայում և հայկական Կողմը՝ Հայաստանում:

4.2 Վերը նշված իրավունքների ձեռք բերման և պահպանման հետ կապված ծախսերը, եթե դա իրականացվում է Ֆրանսիայից և Հայաստանից բացի այլ երկրում, բաշխվում են Համագործակցող կողմերի ներդրած ավանդներին համապատասխան:

<u>Հոդված 5</u>

5.1 Համագործակցող կողմերից յուրաքնչյուրը պարտավորվում է իր կողմից ներկայացված յուրաքանչյուր դիմումի համար Ֆրանսիայում, Հայաստանում կամ այլ երկրում մտավոր

սեփականության իրավունքների ձեռք բերման և պահպանման համար արված ծախսերի մանրամասն հաշվապահություն վարել:

5.2 Համագործակցող կողմերը պետք է մանրամասն հաշվապահություն վարեն այդ իրավունքների իրագործման եկամուտների վերաբերյալ:

<u>Հոդված 6</u>

6.1 Եթե Համագործակցող կողմերից մեկը մերժում է ներդրումը կամ հրաժարվում է ներդրում կատարել կամ մասնակցել ծախսերին, մասնավորապես ներդրման կամ ուժի մեջ գտնվող գործընթացը պահպանելուն ուղղված ծախսերին, ապա այդ մասին անմիջապես տեղեկացնում է մյուս կողմին: Վերջինս, չանտեսելով սույն հավելվածի 2-րդ կետի 3-րդ պարբերության դրույթները, միայն իր անվամբ և բացառապես իր ծախսերով կարող է ներդրում կատարել կամ շարունակել գործընթացը: Հրաժարվող կողմը շարունակում է մասնակցել անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպմանը:

6.2 Համաձայն սույն հավելվածի 6.3-րդ կետի դրույթների և 6.1 պարբերությամբ թվարկված պայմանների՝ համապատասխան Համագործակցող կողմը, որը կիրականացնի կամ կշարունակի ներդրման գործընթացը, կստանա իրավունքների իրագործման արդյունքում ստացված եկամուտները:

6.3 Համագործակցության գործընթացն սկսելուց առաջ Համագործակցող կողմերը կարող են սահմանել այն պետությունների և տարածաշրջանների ցանկը, որտեղ հարկ եղած դեպքում նրանք կպարտավորվեն դիմել մտավոր սեփականության մասին փաստաթուղթ ստանալու համար: Առանձին պայմանագրի շրջանակներում նրանք կարող են համաձայնության գալ այն մասին, որ, եթե նրանցից մեկը չի կամենում ներդրում անել վերը նշված ցանկում ներկայացված պետություններից բացի այլ պետություններում, մյուս կողմը կարող է պահանջել, որ այդ երկրներում մտավոր սեփականության իրավունքը գրանցվի միայն իր անունով: Առանձին պայմանագրով կարող է սահմանվել սույն հավելվածի 2-րդ հոդվածի պայմաններին չհամապատասխանող եկամուտների բաշխման առանձին կարգ:

<u>Հոդված 7</u>

7.1 Համագործակցող կողմերից յուրաքանչյուրի հետազոտական խմբերը և գիտնականները իրավունք ունեն հրապարակել համագործակցության գործունեության շրջանակներում ստացված արդյունքները: Ցանկացած հրապարակումից առաջ Համագործակցող կողմերը պետք է համոզվեն, որ այդ հրապարակումը չի վնասում երրորդ անձանց իրավունքները:

7.2 Համագործակցող կողմերից յուրաքանչյուրը պետք է հնարավորինս արագ ճշգրտի համագործակցության ընթացքում ձեռք բերված այն տեղեկությունների ցանկը, որոնք չէր ցանկանա հրապարակված տեսնել, ինչպես օրինակ՝

- գիտաճյուղի փորձագետներին անծանոթ կամ օրինական միջոցներով դժվարությամբ ձեռք բերվող տեղեկություններ,
- գաղտնիության պատճառով շուկայական իրական կամ պոտենցիալ արժեք ներկայացնող տեղեկություններ,
- տեղեկություններ, որոնց վերաբերյալ շահագրգիռ պետությունների իշխանությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկել գաղտնիությունը ապահովելու համար:

7.3 Համատեղ գործունեության շրջանակներում գաղտնի բնույթի տեղեկատվություն ստացած կողմը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի դրանց գաղտնիությունն ապահովելու համար:

7.4 Համագործակցող կողմերից մեկը նմանատիպ տեղեկատվության հրապարակումից կամ տարածումից առաջ պետք է նախապես ստանա մյուս կողմի գրավոր համաձայնությունը:

Այս դրույթը չի կիրառվում, եթե նշված տեղեկատվության տարածումն իրականացվում է ի նպաստ տվյալ գիտահետազոտական աշխատանքների մեջ ներգրավված աշխատողների կամ կառավարական ներկայացուցիչների:

Ընդունող կողմը պետք է իր որոշման մասին տեղեկացնի դիմողին տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ դիմումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Այս ժամանակահատվածն անցնելուց հետո դիմումը համարվում է ընդունված: Այս դրույթը մնում է կիրառելի սույն Պայմանագրի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Այս վերապահումը խոչընդոտ չի հանդիսանա համագործակցության միջոցառումներին մասնակցող համագործակցող կողմերի գիտաշխատողների ներկայացրած զեկույցների կամ ատենախոսությունների համար, ինչն մտավոր սեփականության մասին օրենսդրության տեսակետից տեղեկատվության տարածում չի համարվում: Անհրաժեշտության դեպքում պաշտպանությունը կարելի է իրականացնել դռնփակ:

7.5 Հրապարակման արտոնություն ստացած տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն տվյալ համագործակցության գործունեության սահմաններում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Հավելված 2-ով սահմանվում են սույն պայմանագրի Հոդված 1-ում նշված համագործակցության ձևերն ու պայմանները՝ Գիտահետազոտական համագործակցության միջազգային ծրագրերը (ԳՀՄԾ), Միացյալ միջազգային լաբորատորիաները (ՄՄԼ) և Միջազգային գիտահետազոտական խմբերը (ՄԳԽ): Համագործակցության այս ձևերին կարող են մասնակցել հայկական գիտահետազոտական կազմակերպությունները: Սույն Հավելվածը կազմում է Պայմանգրի անբաժանելի մասը:

Ներքոշարադրյալ գործունեության գնահատմանը և ֆինանսավորմանը պետք է համամասնորեն մասնակցեն համագործակից կողմերը:

<u>1) Գիտահետազոտական համագործակցության միջազգային ծրագրեր (ԳՀՄԾ)</u>

ԳՀՄԾ-ն կգործի 3 տարի ժամկետով և կհիմնվի գործընկերների հետ համագործակցության վրա: Գործընկերները պետք է ունենան համատեղ հրապարակումներ:

Գիտական բաժնի դրական (սակայն ոչ վերջնական) կարծիքից հետո գիտնականները պետք է համատեղ գիտական առաջարկներ ներկայացնեն ամեն տարի (վերջնաժամկետը՝ մայիսի 31-ը):

ԳՀՄԾ-ի ստեղծումը ի վերջո պայմանավորված է ԳՀԱԿ-ի և համագործակցող գիտահետազոտական հաստատության դրական համատեղ գնահատականով:

ԳՀՄԾ ֆինանսավորվումը նախատեսված է գործուղումների, գիտաժողովների կազմակերպման և անհրաժեշտության դեպքում սարքավորումների աշխատանքն ապահովելու համար:

<u>2) Միացյալ միջազգային լաբորատորիաներ (ՄՄԼ)</u>

ՄՄԼ-ն «առանց պատերի լաբորատորիա» է և իրավաբանական անձ չի հանդիսանում:

Այն միավորում է ԳՀԱԿ-ի 2 (առավելագույնը 3) և մեկ այլ (առավելագույնը 2) պետության լաբորատորիաների աշխատանքային խմբերին:

Այս 2 (կամ 3) լաբորատորիաները, միավորելով իրենց մարդկային ու նյութական ռեսուրսները, 4 տարվա ընթացքում (ժամկետը կարող է անհրաժեշտության դեպքում երկարաձգվել 2 անգամ) իրականացնում են համատեղ ծրագրեր:

ՄՄԼ-ի մեջ ներգրավված լաբորատորիաները պահպանում են իրենց անկախությունը, կարգավիճակը, պատասխանատվությունն ու տեղակայումը: Դրանք ունեն ընդհանուր ղեկավարություն՝ ռոտացիոն սկզբունքով:

ՄՄԼ-ի ստեղծումը չի ուղեկցվելու դրա մեջ ներգրավված գիտնականների արտահոսքով: ԳՀԱԿ-ից և համագործակցող հաստատություններից նրանք ստանում են անհրաժեշտ միջոցներ (սարքավորումներ, գործառույթներ, գործուղումներ, միացյալ հետազոտողի հաստիքներ և այլն):

ՄՄԼ-ն համակարգվում է Գիտական կառավարման կոմիտեի կողմից, որը կազմում է գիտական հետազոտությունների ծրագիր և ներկայացնում է Կառավարող կոմիտեին, որը կազմված է համագործակցող հաստատությունների ներկայացուցիչներից և ՄՄԼ-ի մեջ չներգրավված գիտնականներից:

ՄՄԼ-ն ստեղծվում է ԳՀԱԿ-ի որոշմամբ և նրա համագործակիցների աջակցությամբ : Ստեղծման հայտ կարող է ներկայացվել ցանկացած պահի:

Հայտն ընդունվելուց հետո ԳՀԱԿ-ի տնօրենի և համագործակցող հաստատությունների խորհուրդների միջև կնքվում է պայմանագիր:

3) Միջազգային գիտահետազոտական խմբեր (ՄԳԽ)

ՄԳԽ-ն հասարակական կամ մասնավոր լաբորատորիաների հետազոտական ցանց է, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ, գործում է չորս տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել 2 անգամ:
ՄԳԽ-ի կազմում կարող են գտնվել մեկ գիտական թեմայի շուրջ համագործակցող տարբեր պետությունների բազմաթիվ լաբորատորիաներ՝ նպատակ ունենալով գիտնականների և տեղեկատվության փոխանակում, սեմինարների և դասընթացների կազմակերպում:
ՄԳԽ-ի ստեղծման համար դիմում կարելի է ներկայացնել ցանկացած ժամանակ և դրա ստեղծումը կախված է ԳՀԱԿ-ի և նրա օտարերկրյա գործընկերների որոշումից:
ՄԳԽ-ն ղեկավարվում է մեկ (կամ երկու կամ երեք) համակարգողների կողմից գլխավորվող գիտական կոմիտեի կողմից, որը բաղկացած է լաբորատորիաների ներկայացուցիչներից: Այն պարբերաբար իր գործունեության մասին զեկույցներ է ներկայացնում գլխավոր կոմիտեին, որի կազմի մեջ մտնում է յուրաքանչյուր կազմակերպության ղեկավարության ներկայացուցիչ՝ որոնք ՄԳԽ լաբորատորիաների անդամ չեն:
Ընդունման դեպքում համաձայնագիր է կնքվում ԳՀԱԿ-ի գլխավոր տնօրենի և համագործակցող մարմինների ղեկավարների միջև: